

## ԴՊՐՈՅԼԿԱՆ ԱՌՈՂՋԱՊԸՆՈՒԹԻՒՆ

### Յոգնածութեան հարցը դպրոցում

Ծնողների, ուսանողների և առողջապահագետ բժշկաների բազմաթիւ յարձակմունքների շարքում դպրոցի գէժ առաջ են մղել մի խիստ ծանր և, ինչպէս այս րոպէիս կաշխատենք ապացուանել, չափազանց անարդար մեղադրանք:

Այն է, դպրոցին մեղադրում են, որ նա փոխանակ իր սաների մտաւոր ուժերը թարմացնելու և ամրապնդելու, ընդհակառակը, յոգնեցնում է և տանում դրա շնորհիւ գէպի շատ հոգեկան հիւանդութիւններ, որ այնքան տարածուած են ուսանող պատանիների մէջ:

Կաշխատենք ցրել այս բաւական անարդար մեղադրանքը:

Դպրոցում բժշկական դիտողութիւնները կանոնաւոր դարգացած երեխաների վրայ երևան չեն հանել ոչ մի մտաւոր յոգնածութեան նշան: Բժշկական քննութեան այսպիսի հակասութիւնը ընդ գէժ ընդունուած տեսակէտի բացատրում է նրանով, որ բոլորովին այլ պատճառների վրայ հիմնուած երեւոյթները սխալմամբ նկատուում են իբրեւ հետեւանք բացառապէս մտաւոր յոգնածութեան, նոյնպէս և այս հակասութիւնը առաջացել է կանոնաւոր, առողջ երեխաների մասին չհաստատուած խիստ պայմանական հասկացողութեան շնորհիւ:

Նախ պէտք է ուշադրութիւն դարձնել այն բանի վրայ, որ նոյն իսկ ամենադիւրին ուսուցման եղանակը կարող է երեխաների մէջ առաջացնել նկատելի յոգնածութիւն: Իսկ լաւ մանկավարժի ձեռքի տակ մանուկների մտաւոր յոգնածութեան մասին հազիւ գանգատներ են լսուած: Շատ յաճախ այդ յոգնածութեան պատճառը լինում է բացառապէս դասարանի խեղդուկ օդը, որ շատ դժուար է հեռացնել մեր երեխաներով լեցուն դպրոցներից: Տօթը անխուսափելի հետեւանք է սենեակի խիստ տաք անշարժ

օգիւ Յատուկ յարմարութիւններ, որ երեխաների համար անփափաք օգիւ շարժում առաջացնէին, մինչև այժմ դոյնութիւն չունեն և մինչև անգամ հասարակ մատչելի միջոցները սենեակի միջոցով կանոնաւորելու համար մինչև այժմ կարօտ են շատ բարեփոխութեան:

Բացի դպրոցական դոյութիւն ունեցող պայմաններից, որոնք թոյլ չեն տալիս չեղօքացնել դպրոցում մտաւոր յոգնածութիւնը, պէտք է մատնանշել երեխաների ընտանեկան դաստիարակութեան թերութիւնը, որ նոյնպէս պատճառ է դառնում մեծ մասամբ անճշտ եզրակացութեան: Եթէ երեխաները սովորել են տանը տեական և յամառ աշխատանքի (ինչպէս էլ լինեն դրանք), դպրոց մտնելով նորա հեշտութեամբ տանում են կարգապահութեան բոլոր դժուարութիւնները, որ դժբաղդաբար միշտ անխօս սափելի են դպրոցում: Ձի կարելի չնկատել, որ երեխաների տնային անկանոն դաստիարակութիւնը մինչև 6 տարեկան հասակը յաճախ ստեղծում են այնպիսի պայմաններ, երբ դպրոցական ամեն տեսակ ուսուցումն արդէն յոգնեցուցիչ է:

Եւ այսպէս, ահա թէ որտեղ պիտի փնտռել մեղ հետաքրքրող երևոյթի հիմքը. սա գտնւում է ժամանակակից դպրոցի անբարեյաջող առողջապահական պայմաններում և մանուկների ընտանեկան այլանդակ դաստիարակութեան մէջ: Գիտութիւնը, ուսուցումը, մանկավարժները այստեղ մեղ չունեն:

Այժմ անցնենք մանուկների դպրոցում յոգնածութեան մասին եղած թիւրիմացութեան, որ խանգարում է լուսաբանել այդ խնդիրը գիտական—անկողմնակալ տեսակէտով:

Այս թիւրիմացութիւնն է հասկացողութեան անորոշութիւնն ու միութիւնը թէ՛ ինչ բան է առողջ և կանոնաւոր երեխան:

Թուլակազմ երեխաներն էլ կարող են ազատ կատարել դպրոցի պահանջները ինչպէս և ուժեղները: Այստեղ վճռական նշանակութիւն ունի միմիայն երեխայի հոգե-

կան և ֆիզիքական դրութիւնը՝ Մանկական կազմուածքի պայծառ զարտուղութիւնները արագ ճանաչում են և սորանով զրկում են հնարաւորութիւնից երկու իրար հակասող կարծիք ունենալու Բայց այլ կերպ է երեխայի հոգեկան կողմը. որովհետեւ երեխայի ոչ պայծառ տրտույթացեալ մտաւոր սահմանափակութիւնը ծածկուած է մնում թէ ծնողների և թէ բժշկի համար։ Այդ կարող է միայն երեւան հանել ուսուցիչը, որը հնարաւորութիւն ունի յաճախ և խնամքով ստուգելու մանկական խելքի և ուշադրութեան տարածանքը։ Թոյլ ուշադրութեամբ երեխաների վրա դիտողութիւնը չի կարող ծառայել իբրեւ փաստ ուսուցման ժամանակակից սխտեմի դէմ։ Մինչդեռ երեխաների յոգնածութեան դէմ բողոքները գալիս են գլխաւորապէս, ինչպէս ցոյց է տալիս կեանքը, այն երեխաների ծնողներից, որոնք կամ բոլորովին չեն կատարում դպրոցի պահանջները, կամ կատարում են կիսատապաւոր։ Խօսելով ֆիզիքապէս կանոնաւոր կամ հիւանդ երեխաների մասին, մենք պէտք է միշտ, ամենից առաջ, ուշադրութիւն դարձնենք երեխայի ժառանգական պայմանների և տնային դաստիարակութեան վրա և ոչ բացառապէս վատ դպրոցի ազդեցութեան վրա։

Այժմ վերցնենք դէպքեր, երբ հաստատապէս ապացուցուած է յոգնածութեան երեւոյթ, որ առաջացել է բացառապէս դպրոցում ուսուցման եղանակից և պայմաններից։

Ապացուցուած է, որ այդպիսի երեխաները պատկանում են ճնշող մեծամասնութեամբ ֆիզիքական և մտաւոր քով ուժերի և ընդունակութիւնների տէր տիպին։ Բայց այդպիսի երեխաների համար կարիք չկայ ընդհանուր դպրոցական բարեփոխութեան, նրանց համար հարկաւոր է առանձին ուսումնարան, ուր դաստաւութիւնը յարմարեցրած լինի խիստ թեթեւ յոգնածութեան և մտաւոր աշխատանքի քիչ արտադրութեան։

Ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ ժամանակով այսպիսի հաստատութիւնների կարիքը այնքան անհրաժեշտ ու մեծ չի լինիլ, եթէ երեխաների ընտանեկան դաստիա-

րակութիւնը ծնողների և բժիշկների կողմից կկատարուի աւելի իրական մանկավարժական տեսակէտով:

Յանկանուժ ենք մեր դպրոցներին իր պատերի մէջ տեսնել մանուկների նոր սերունդ աւելի առողջ և մտաւորապէս զարգացած քան, անցեալն էր:

Այն ժամանակ և յոգնածութեան խնդիրը կկորցնի իր այժմեան նշանակութիւնն ու ծանրութիւնը, իսկ մի քանի ժամանակից յետոյ, գուցէ կանցնի պատմական շրջանը

Պրոֆ. Ա. Զեքեի